

ԶԱՅՆ

ՀԱՄԱՇԵՆԱԿԱՆ

«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ Անվճար



ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հայկանուշ Հովսեփի Մեսրոպյան, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ լեզվի հետազոտության ավագ գիտաշխատող: 1970թ. ոսկի մեդալով ավարտել է Կիրովականի Գ. Սունդուկյանի անվան N 8 միջնակարգ դպրոցը, 1975թ. Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, 1997թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի աստվածաբանական երկամյա դասընթացները, 2000թ. Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակույթի կենտրոնի պարսկերենի երկամյա դասընթացները: Հայոց լեզու է դասավանդել Կոմիտասի անվան կոնսերվատորիայում (1990-1994), Պետական ճարտարագիտական համալսարանում (1998-2008): Ներկայումս դասավանդում է Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական և Պետական տնտեսագիտական համալսարաններում: Աշխատել է «Լուսավորիչ» (1990-1993), «Անկախություն» (1993-1995), «Քրիստոնեայ Հայաստան» (1997-1999), «Շողակն Արարատյան» (2000-2004) թերթերում որպես խմբագիր, արդարագրության նախարարությունում որպես լեզվաբան-փորձագետ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քարոզչական կենտրոնում (1997-1999), Արարատյան Հայրապետական թեմում: Մասնակցել է թվով 50 հանրապետական և միջազգային գիտաժողովների: Հեղինակ է երեք հայրուրից ավելի գիտահանրամատչելի, լեզվաբանական, հոգևոր-քրիստոնեական հոդվածների, գրախոսությունների, որոնք լույս են տեսել հանրապետական մամուլում, գիտական հանդեսներում և ժողովածուներում: Կազմել է Գարեգին Առաջին կաթողիկոսի երկերի բառարան (Մոնրեալ, 2000): Հրատարակության է պատրաստել մեկ տասնյակից ավելի բանասիրական, կրոնակենտրոն գրքեր՝ «Խօսքս պատարագի մշխարհի պես» (Սբ. Էջմիածին, 1999), «Հայաստանեայց Եկեղեցին» (Մոնրեալ, 2000), «Խմորիկըն աղօթքով» (Մոնրեալ, 2000), «Ուղեցույց ուխտի ճանապարհին» (Սբ. Էջմիածին, 2001), «Հայ Եկեղեցին. Բարձր Կիլեսերեան» (Մոնրեալ, 2002), Եղուարդ Գոլմանճան, «Երկեր» (Երևան, 2005), «Գրական լեզու և բարբառ» (Երևան, 2008) և այլն: 2009 թ. լույս է ընծայել «Ածականական հոմանիշները հայերենի բարբառներում» մենագրությունը (Երևան, 320 էջ):

ջին >մէջում, հիւսել >հուսուշ) և քմային այ > ա (այծ >ած, գայլ >կալ): Բաղաձայնական համակարգը, ըստ մեր դիտարկումների, եռաշարք է՝ ձայնեղ >> խուլ տեղափոխություն տեղաշարժով, այսինքն՝ բառակազմում ձայնեղները վերածվում են խուլների, խուլները՝ ձայնեղների, ինչպես և ընդունված էր միջին գրական հայերենում (բամբակ >պօմբակ, գանգատ >կօնգատ, դատարկել >տայրգուշ, ճանճ >ջօնջ):

Բարբառագիտական գրականության մեջ խնդրո առարկա բարբառի բաղաձայնական շարքերի առանձնացման հարցում տարբեր մոտեցումներ կան: Ա. Ղարիբյանը Համշենի բարբառի հայերենի համարում է Տրապիզոնի շրջանը, և բարբառը դասում է կը ճյուղի եռաստիճան խլազուրկ խմբի մեջ, այսինքն՝ բ, բ, փ: Հ. Աճառյանը Մալայում արձանագրում է շնչեղ ձայնեղներ, Տրապիզոնում պարզ ձայնեղներ, ճանկում խուլներ (գօճգողուշ, կօնգողուշ՝ «գանգատվել») (Քննություն Համշենի

ՀԱՄՇԵՆԱԳՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԵՎ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱԳԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համշենը (Համանաշենը) Թուրքիայի Ռիզեի նահանգում է, Աս ծովի հարավ-արևելքում: Լեռնային այդ երկիրը 17-18-րդ դարերում բացառապես հայաբնակ էր: Հետագա դարերում այն ենթարկվում է ֆիզիկական բնաջնջման և մահմեդականացման: Օսմանյան բռնաճնշումներից խույս տալու նպատակով հայերից շատերը թողնում են Համշենի անտառաշատ վայրերը և բնակության մոտ վայրեր որոնում՝ շարժվելով դեպի արևմուտք՝ Գուլեսյու, Կալկանդեղ, Օֆ, Սյուրմենե, Արսին, Յումրա, Տրապիզոն, Գիրեսուն, Օրդու, Ֆաթսա, Սամսուն, Սինոպ, Ադաբազար, հասնում մինչև Լիկոնեի:

Տրապիզոն քաղաքում հիմնականում բնակվում էին Բագրատունյաց թագավորության անկումից հետո Անիից և հարակից վայրերից եկած հայերը: Համշենահայերը նախընտրում են Տրապիզոնի մերձակա գյուղական վայրերը՝ Խուրշունլի, Գարա-Տերե (Աս գետ), Թորոսլի, Յունիէ և այլն: Մինչև 1915 թ. Համշենում և շրջակա տարածքներում հայաբնակ էին մոտ 100 անուն գյուղ՝ Ձեֆանոս, Սամարուքսա, Կուլսլա, Շանա (Ծիֆնիլա, Կյուշանա), ճոշարա, Կալաֆկա, Ուզ, Ապիոն, Կոնոնիլա, Փերվանա, Գատրա, Էլեմնաս, Վահանացիք, Մախթելա, Քուրունոց, Քինունոց, Սարես, Ալշաբ-Տերե, ժուժք, Փիրկի, Մանտրալ, Փլաթանա, Սաթարիա, Մալա, Անիֆա, Վերանա, Էլեու, Ֆոշ, Ղալիմոս, Կիրասուն, Օրտու, Կիրասուն, Չամալ, Մուսազըրզ, Քելթեփե, Խոճուղու, Մուլար, Խոշկելի, Պագարու, Գուշնի երեք, Ալաճատան, Սայաճա, Գրնա, Պուլթան, Գատրո, Չաթալ, Ֆոտանա, Թեփեթոյ, Չաթալ, Օրթաբլամախ, Էրեննիք, Մարթիլ, Թեթլուր, Թախտալլազ կամ Ղափուղայա, Էորեյի-Պե, Գոնուբլուք, Գապալաք, Գուրշունլու, Գարա-Ըթուք, Աղուլուն, Ղապանեվիզ, Երի-Տերե, Ուլու-Փունար, Կեովճեթոյ, Աղճա-Կյունե, Սըթա-Սու, Յուշ-Փունար, Քեռլիք, Էբինճիք, Քերփիճիք, Յաղապասան, Պալըզը, Քելաս, Եթյուզթեյ, Ղո-

ծանան-Պաշ կամ Ղարաճալը, Էլեմտաղը, Սուլունա, Չըլըզըլըզ, Ղայա-Արտը:

Պարբերաբար կրկնվող կոտորածների պատճառով անընդհատ տեղի են ունեցել բարբառախոսների տեղաշարժեր, որոնց հետևանքով փոփոխվել է Համշենի բարբառի լեզվաբանաբանական պատկերը: Մինչև հայոց զանգվածային տեղահանությունները, Համշենի հարակից շրջանների՝ Արդվիհի, Արդահանի, Բաբերդի, Երզնկայի, Կարինի, Գյումուշխանեի հայերի համար ապաստան էին Համշենի անտառները: Համշենահայերը, ինչպես նաև Արևմտահայաստանի տարբեր շրջաններից Համշեն եկած հայերը բարբառախոս էին: Համշենի բարբառի հետ միաժամանակ գործածվում էին Խարբերդ-Երզնկայի, Կարինի, Անիի և այլ բարբառներ: Ժամանակի ընթացքում եկվոր բարբառները մոռացվում են լեզվական տարրեր թողնելով բնիկների խոսքում:

20-րդ դարակազմից ապրելով կովկասյան ժողովուրդների մեջ՝ համշենահայերը շարունակում են խոսել մայրենի բարբառով և մինչև օրս չեն մոռացել այն՝ չնայած ռուսերենի, կովկասյան լեզուների և գրական արևելահայերենի գորեղ ազդեցությանը ուսումնական գործընթացի և մամուլի ու գրադատարակության ճանապարհով: Ցավոք, երիտասարդ սերունդը ներկայումս սկսել է տուրք տալ ռուսերենին:

Հ. Աճառյանը 20-րդ դարի առաջին կեսին Համշենի տարածքում գործածված խոսվածքները բաժանում է երեք հիմնական մասի՝ Համշենի կամ ճանիկի, Տրապիզոնի և Օրդուի: Համշենի կամ ճանիկի խոսվածքով հաղորդակցվել են տարբեր ժամանակներում Արևմտահայաստանի տարբեր վայրերից Համշենում ապաստան գտած հայերը: Տրապիզոնի բարբառով խոսել են Համշենը թողած և Տրապիզոնի շրջակա գյուղերում ապաստանած հայերը, որոնք հետագայում անցան Կովկաս և Կուբան: Այսպիսով, Տրապիզոնը Լիկոնեի, Կեսարիայի, Կեսարիայի հարող բարբառային կղզյակ էր՝ բնակեցված Կարնո

բարբառի Անիի խոսվածքի ներկայացուցիչներով: Հին Համշենի սերունդների հաղորդակցության միջոցը Օրդուի խոսվածքն է, քանի որ բուն համշենցիներն ի վերջո հաստատվում են Օրդուում և արևելքից ու արևմուտքից հարևան Գիրեսունի և Ֆաթսայի շրջաններում:

Ըստ Գ. Ջահուկյանի՝ բարբառների դասակարգման բազմահատկանիշ սկզբունքի՝ Համշենի բարբառը մտնում է արևմտյան խմբակցության Համշենի կամ հյուսիսարևմտյան միջբարբառախմբի մեջ՝ Մարթիլի, Մալայի, Ձեֆանոսի խոսվածքներով: Գ. Ջահուկյանը Տրապիզոնի և Օրդուի հաղորդակցական հայերենը համարում է Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբի Պուլի միջբարբառի խոսվածքներ:

Գիտարկելով այս տարածքում հայության տեղաշարժերը, հայ բարբառագետների դասակարգումները, ինչպես նաև Կովկասի և Արևելահայաստանի ներկայիս լեզվափոխակը, կարծում ենք, որ Համշենի բարբառը որպես տեղի լեզվական հաղորդակցության միջոց, հաղթող է դուրս եկել եկվոր խոսվածքների շրջապատում: Անիի, ինչպես նաև Երզնկայի դաշտի հայությունը ժամանակի ընթացքում մոռացել է իր բարբառը, յուրացրել է Համշենի բարբառը՝ միաժամանակ այն հարստացնելով Կարնո և Խարբերդ-Երզնկայի բարբառների լեզվական տարրերով: Այդ են վկայում նաև ՀՀ ԳԱԱ լեզվի հետազոտության այդ տարածքը ընդգրկող բարբառային գրանցումներով տեղիների մեր համեմատությունները, որոնց արդյունքները ներկայացնում ենք ստորև:

Ըստ ձևաբանական դասակարգման՝ Համշենի բարբառը պատկանում է կը ճյուղին:

Համշենի բարբառի բնորոշ են պարզ ձայնավորները, առկա են նաև ա, օ, ու քմայիններ: Գրաբարի ա, ոյ, իւ երկբարբառները պարզվել են համապատասխանաբար դառնալով ոյ > ու (լոյս > լուս, կապոյտ > գարուր), իւ > ու (ծիւն > ծուն, մը-

բարբառի, էջ 42): Իսկ «Գաւառական բառարանում» առանձնացնում էր Տրապիզոնի և Համշենի բարբառներ՝ ընդունելով երկշարք խլազուրկ բաղաձայնական համակարգը: Նա գրում է. «Հին հայերենի երեք խումբերու տեղ կը մնայ երկու խումբ. թրթռուն և բաւ. գրաբարի թրթռուն եւ խուլ ձայները հաւասարապէս կը դառնան թրթռուն, թաւերը կը մնան» (էջ 32): Հանդիպում է նաև ձայնեղի շնչեղխլազուրկ (գինի >քիհի), որը բնորոշ հատկանիշ է Համշենի բարբառին, և կարծում ենք, Խարբերդի բարբառի ազդեցություն է: Բարբառում դիտվում է շնչեղ խուլների ապաշնչեղացման երևույթ (ոչ բառակազմի դիրքերում), որը, սակայն, համատարած ընդգրկում չունի: Չայնաբանական երևույթներից առանձնահատուկ է մ և ն ընդհանրացման շրջանը, որը հնչյունափոխությունը (աման >ոմոն, դանակ >ուոնագ): Բառավերջում և նախաբաղաձայնական դիրքերում կա ոյ >յ (խնձոր >խնձօյ, գործել >կօյձուշ), ո շ շ անցումը (գաշտայ գու՛ «կարողում էր») և այլն:

Հիմնական հոգնակներն է նի-ն (օնուն>օնուննի «անուն», խընձեր >խընձի, ջօմպա >ջօմպանի «ճանապարհ»), կան նաև այլ հոգնակներ՝ կ (<ք) (քիհի >քիհիկ «գինի», քօմի >քօմիկ «քամի», սերնձու >սերնձուկ), էր (գօվ >գօվեր՝ «կով», աձ >աձեր՝ «այծ»), վի (ծունգ >ծընգվի, ծեռ >ծեռվի). բաղադրյալ հոգնակներն են վընի (<վի+նի) (յեկ >օռվընի «ոտք»), էր+նակ (քուր >քուրեյնակ, դակ >դակեյնակ «տագ») և այլն: Հոգնակի ձևերը, ինչպես արևմտյան բարբառներում և արևմտահայ գրական լեզվում է, պատկանում են ու հոլովման, որոնք կարող են հանդես գալ ու որոշիչ հոլով կամ առանց հոլի (կիշէյնուն՝ «գիշեր», կօլէրուն և այլն): Որոշիչ հոլ ստանում է նաև եզակի սեռականը (ձարին շուքը՝ «ձառի ստվերը», շարիդին ջօքը՝ «պարանի ծայրը», պղխերիդին մուխը՝ «երդիկի մուխը»):

(Շարունակելի)

Այլագր N 11-12, 2009թ.

Դեռ 1919թ. մարտի 14-ին լսելով իս. Ավրաբեգյանի զեկուցումը, Վրաստանի ՀԱԽ-ը, համարում էր իր Գործադիր մարմնին «աջակցել Առաքելյանին վրաց կառավարությանն առջև իր միսիան կատարելու համար»²⁵:

Յետևանքով, որևէ խնդիր չէր առաջանում, երբ Ավրաբեգյանը «յաճախ անկախ դիմումներ է տվել կառավարությանը՝ շրջանի այս կամ այն կարիքը բավարարելու համար: ...[Քանի որ] դրան երբեք դեմ չի արտայայտվել Վ. Զ. Ա. Խորհուրդը, ընդհակառակը յանձնարարել է Գործադիր Մարմնին օժանդակել Առաքելյանին իր դիմումների ժամանակ, [սակ] հենց սրա հիման վրայ էլ ընկ. Ա. Երզնկյանը, իբրև Գործադիր Մարմնի նախագահ, օգնել է Սուխումի Հայոց Ազգային [խորհրդին] [1920թ.] մարտ ամսին իր դիմումի ժամանակ»²⁶: Բանակցություններին մասնակցել է նաև Արամայիս Երզնկյանը, քանի որ ենթադրվում էր, թե այդ կառավարական նպատակով կհատկացվի Վրաստանի ՀԱԽ-ի միջոցով²⁷: «Ի պատասխանի Ձեր հարցումին,- գրում էր տետուհ Տ. Սողոմոնյանը դպրոցների վարիչ Ի. Կարությունյանին, -թե անցել 1919-1920 ուսումնական տարում մեր (Սուխումի շրջանի) դպրոցները պետական նպաստ ստացել են, թե ո՛չ, պիտի յայտնեն հետևյալը. Կառավարությունը Սուխումի շրջանի Հայոց Ազգային Խորհրդի դիմումի հետևանքով խոստացաւ փետրվար ամսից սկսած մեր ուսուցիչներին 800-ական ռուբլի յաւելում տալ մինչև նոր բնօրէնտային տարուայ սկիզբը, որից յետոյ լրիւ ռոճիկ: Սակայն իրականում մինչ օրս (ինձ 1920թ. հոկտեմբերի սկիզբը-Բ. Մ.) ո՛չ մեր դպրոցները և ո՛չ էլ որևէ ուսուցիչ պետական գանձարկոյից ոչ մի կոպէկ չի ստացել»²⁸: Ի դեպ, 1920-1921 ուսարվա համար այդ բանակցությունները շարունակվել էին: Վարկը տրամադրվել էր 1920թ. ապրիլին, քանի որ ճումբուրիձեի ասելով՝ «այդ ժամանակ նախարարութեան մեջ մշակուան էր 1920-1921 քիւլտային տարուայ նոր նախահաշիվը և [Աբխազիայի] հայկական դպրոցներն առանց արգելքի մտցւեցին պետութեան հաշուով պահուող կառավարական դպրոցների թի մեջ»²⁹: Երկու կիսամյակների համար նախատեսված դրամը փոխանցվել էր Աբխազիայի զեմստվոներին, սակայն այդ մասին Սուխումի շրջանային ՀԱԽ-ին չէին իրազեկել³⁰: 1920թ. օգոստոսին կայացել էր շրջանային ուսուցչական ժողով, որը պարտավորեցրել էր իս. Ավրաբեգյանին պարզել խոստացած հավելումների ճակատագիրը: 1920թ. սեպտեմբերին Սուխումի շրջանի գավառական զեմստվոների կենտրոնական վարչությունը շրջաբերական էր հղել Աբխազիայի հայկական բոլոր դպրոցներին, որով տեղեկացնում էր, թե նրանք անցնում են զեմստվոների վերահսկողության ներքո և այնուհետև պահվելու էին վերջիններիս միջոցների հաշվին, իսկ նախկին ուսուցիչներն էլ ազատվում են աշխատանքից: Դա նշանակում էր, որ ուսուցիչներին վարձելը և ընդհանրապես դպրոցական գործի ղեկավարությունն անցնում է զեմստվոների վարչություններին: Սուխումի շրջանային ՀԱԽ-ի Գործադիր մարմնի անդամները անմիջապես այդ մասին հեռագրով տեղեկացնում են Ավրաբեգյանին: Այդ պահին Թիֆլիսում գտնվող Ավրաբեգյանը, կատարվածի մասին չիրազեկելով Վրաստանի ՀԱԽ-ի Գործադիր մարմնին, իսկույն դիմում է հղում լուսավորության նախարարի տեղակալ Ն. Կ. Ցիցցաձեին, որտեղ մանրամասն ներկայացնում է իրավիճակը և մատնանշում, որ նման «հանգամանքներում Սուխումի շրջանի զեմստություններն անկարող են բավարար բարձրութեան վրայ պահել հայ ազգային դպրոցները»³¹ և նրանք պիտի շարունակվեն պահվել Հայոց Խորհրդի ղեկավարութեամբ: Կառավարությունը պիտի նպաստ տայ հայ դպրոցներին զեմստությունի միջոցով: Հայոց Խորհուրդը [դարձյալ] կը կազմի ուսուցչական խմբերը, կը ներկայացնի

զեմստությունն ուսուցիչների ռոճիկների հաշիւը և կատանայ դրամը և կը բաշխի նրանց [աշխատավարձը], իսկ տարուայ վերջում ընդհանուր տեղեկագիր կը ներկայացնի իր դպրոցների մասին: Այսպիսով Սուխումի շրջանի Հայոց Ազգ. Խորհուրդը իրեն է վերապահում հայ դպրոցների ամբողջ ղեկավարութիւնը, իսկ կառավարական օրգաններին՝ զեմստությունն մնում է միայն ընդհանուր հսկողութեան գործը, որը առանց [կառավարական] նպաստ տալու անգամ նրանց իրաւունքն է»³²:

ԲԵՆԻՎԱՄԻՆ ՄԱԻՆՅԱՆ

Պատմական գիտությունների բեկնածու

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆ ԱԲԽԱԶԻԱՅՈՒՄ (1918-1920 թթ.)



Սուխումից հայեր (Ուստյաններ, Փափազյաններ, Պատրիկյաններ), 1912թ., Սուխում:

Սակայն, վրաց պաշտոնյան Ավրաբեգյանի ներկայացրած խնդրանքը մասամբ է ընդունելի համարում և առաջարկում է հայկական ժողովրդական դպրոցները վերջնականապես ենթարկել զեմստվոներին³³: Դրա հետևանքով, Ս. Սողոմոնյանի վկայությամբ, հետագա բանակցությունները ծախսողվեցին³⁴: Անտեսելով այդ հանգամանքը, Վրաստանի իշխանություններին նեցուկ կանգնած հայալեզու մանուկ վստահություն էր ներշնչում, թե «Կառավարութեան և Սուխումի Հայոց Ազգային Խորհրդի միջև բանակցութիւնները դեռ վերջնական ելքի չեն հանգել, բայց համարեա առանց կասկածելու կարելի է պնդել, որ խնդիր լուծումը դրական կլինի և Սուխումի [շրջանի հայկական] դպրոցները, ապահովելով միութեամբ կառավարութեան կողմից, կը մնան [Հայոց] Ազգային Խորհրդի ղեկավարութեան տակ»³⁵:

1920թ. Վրաստանում տիրում էր տնտեսական ընդհանուր ճգնաժամ³⁶: Մամուլը գրում էր, որ «այն չնչին ռոճիկները (4 միլի 9 հազար ռուբլի), որ սահմանած Հայոց Խորհրդի կողմից ուսուցիչների համար՝ միանգամայն անբավարար են: Հազիւ թէ ընտանիքաւոր մի մարդ կարողանայ այդպիսի ռոճիկով ապրել: Հազիւ թի թէ շատ պատրաստած մի անձնատրոփին համաձայնի ուսուցչական ասպարեզում աշխատել այդպիսի վարձատրութեամբ: Այս հանգամանքը աւելի լուրջ բնույթ է ստանում, եթէ նկատի առնենք, որ քաղաքային և զեմստային դպրոցների ուսուցիչներին, բացի մինիստրութեան սահմանված նորմերից, հաճախ տրուում է նաև յավելյալ վարձատրութիւն և պարեմ»³⁷: Մեկ այլ թերթ արձանագրում էր. «Բազմաթիվ ուսուցիչներ սպասում են, թէ երբ վերջապես կը ստանան ռոճիկների մնացորդները»³⁸: Մամուլում տեսակետ է

հնչում, որ «պետք է խնդրել Վրաստանի կառավարութիւնից հայկական դպրոցների պահպանութեան համար որևէ գումար համապետական միջոցներից, որոնք լրացում են հարկերով - որ վճարում է այժմ նաև Վրաստանի հայ ազգաբնակչութիւնը: ...[Դա] կը լինի արդարացի և համապատասխան ազգային փոքրամասնութիւնների իրաւունքների [ապահովման] սկզբունքին...»³⁹: Հայկական ժողովրդական դպրոցների ֆինանսական ճգնաժամը խորանում էր նաև նրանով, որ վրաց ազգայնական կառավարությունն իրականացնում էր հայ ունևոր խավի սնանկացման քաղաքականություն: Դրա հետևանքով Վրաստանի ՀԱԽ-ը չկարողացավ անհրաժեշտ գումար հանգանակել: 1920թ. սեպտեմբերին Վրաստանի ՀԱԽ-ի ֆինանսական բաժնի վարիչ Ան.

թինը գիտակցորեն սաբոտաժի է մատնում [Հայոց] Ազգային Խորհրդի դիմումները, ամիսներով ձգձգում նրանց պատասխանները, որպեսզի փաստորեն գրկի Խորհրդին հնարավորութիւնից դպրոցական գործը վարելու»⁴⁰: Լուսավորության նախարար Ն. Ռամիշվիլին այն կարծիքին էր, որ նախքան նպաստ հատկացնելը հարկավոր է պարզել Վրաստանի ՀԱԽ-ի և կառավարության փոխհարաբերությունները: Նա գտնում էր, որ հայկական ժողովրդական դպրոցները պետք է պարտադիր հանձնվեին զեմստություններին⁴¹: Ն. Ռամիշվիլին շեշտում էր, որ Հիմնադիր ժողովը, արձակելով սուբսիդիայի մասին վճիռը, անպատճառ պետք է «աչքի առաջ» ունենար հայկական դպրոցները զեմստություններին հանձնելու հնարավորությունը՝ մինչև մշակութային ինքնավարու-

թյան խնդիր լուծումը: Որպես փոխհարաբերությունների կարգավորման հնարավոր օրինակ նախարարը մատնանշում էր Սուխումի շրջանային ՀԱԽ-ի դիմումում որդեգրված վարքագիծը և առաջարկում էր հայկական այլ դպրոցների խնդիրը ևս կարգավորել նույն կերպ՝ տրամադրելով հսկողական ֆունկցիան զեմստություններին⁴²: Վրաստանի ՀԱԽ-ի անդամների հետ հանդիպման ժամանակ Ն. Ռամիշվիլին շարունակ շեշտում էր Սուխումի շրջանի հայկական ժողովրդական դպրոցների նկատմամբ գտած ելքը (°) և գովում էր իս. Ավրաբեգյանին: ՀԱԽ-ի տնտեսական մասի վարիչ Ար. Միանսարյանը, տալով հաշվետվություն բանակցությունների մասին, ասում էր. «Ռամիշվիլին հրճում էր... և ուրախ էր, որ Սուխումի դպրոցները կառավարութեան են անցել: ...Եթէ Ռամիշվիլին հրճում է, ուրեմն մի վատ բան է կատարվել մեզ համար»⁴³: Այսպիսով, վրաց նախարարն Ավրաբեգյանի դիմումն ընդունելի էր համարում այն չափով, որքանով Սուխումի շրջանային ՀԱԽ-ի նախագահը համաձայնվել էր ճանաչել Աբխազիայի հայկական ժողովրդական դպրոցների նկատմամբ զեմստվոների վարչությունների վերահսկողական լիազորությունները և գարգացնելով այդ սկզբունքը, Ն. Ռամիշվիլին առաջարկում էր հայկական կրթական օջախները վերջնականապես հանձնել զեմստությունների տնօրինմանը: Իս. Ավրաբեգյանի ինքնուրույն գործելակերպը հակասության մեջ էր մտել Վրաստանի ՀԱԽ-ի ղեկավարության վարած քաղաքականության հետ: Այսպես, 1920թ. սկզբներին լուսավորության նախարարը հայկական ժողովրդական դպրոցների համար նշանակել էր կառավարական վերաստուգիչ, որը, վրաց պաշտոնյաների հավաստիացումների համաձայն, օժտված էր միայն տեղեկատվական ֆունկցիայով և իբր չէր միջամտելու հայկական դպրոցական կյանքի անցուղարձին: Այս հարցը քննվեց Վրաստանի ՀԱԽ-ի նիստում: Ի վերջո, պատասխանը եղավ, որ Վրաստանի ՀԱԽ-ը շարունակում է պաշտպանել հայկական ժողովրդական դպրոցների ինքնավարությունը և, հետևապես, մերժում է նախարարի հրամանը⁴⁴: Խիստ անհանգստացած հայկական կրթական օջախների ճակատագրով՝ Սուխումում ՌԳԻ-ի տեղի անդամները, հյուպատոս Վ. Սահակյանի գիտությամբ, հայ բնակչությանը կոչ էին արել Աբխազիայի հայկական դպրոցները դուրս բերել ՀԱԽ-ի իրավասությունից և ենթարկել հատուկ վարչությանը, որը պետք է գործեր ՌԳԻ-ի հյուպատոսարանին կից և նրա վերահսկողության ներքո: Այդ ծրագիրը, սակայն, կասեցրեց Վրաստանի ՀԱԽ-ի շրջանային տետուհ Վ. Թուրազյանը, քանի որ, նրա կարծիքով, դա հարցի լուծում չէր և ընդհակառակը, կհանգեցներ վրաց իշխանությունների կոշտ պատասխանի, որոնք այդ քայլը կդիտեին որպես իրենց պետության ներքին գործերին միջամտելու փորձ⁴⁵:

(Շարունակությունը՝ 8-րդ էջում)

ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ ԿՐՈՆԱՓՈՒՆ ՀԱՄՇԵՆԱԶԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

**Ս. Գ. Վարդանյան,
Կրոնափոխ համալսարանի բարձրագույն, բանախոյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Երևան,
ԵՊՀ հրատարակչ., 2009, 428 էջ:**

Սերգեյ Վարդանյանը, ինչպես պարզվում է գրքի առաջաբանից, կյանքի նպատակն է դարձրել իր ժողովրդից ուժացած՝ բռնի կրոնափոխված մի հատվածի՝ համալսարանի, լեզվի, բանախոյուսության, երգարվեստի արժեքները հավաքելու խնդիրը:

Սերգեյ Վարդանյանը հանրությանը ներկայացնելով իր գրառումների արդյունքները՝ անդարձ կորստից, հիրավի, փրկել է, մատչելի դարձրել լեզվական և բանախոյուսական արժեքներ՝ մասնագետներին հանձնելով սովորածով մի հատոր իր եզրակացություններով և դիտողություններով հանդերձ: Եթե նա հապաղեր ևս մեկ-երկու տասնամյակ, ապա կրոնափոխված համալսարանի լեզվից և բանախոյուսությունից շատ բան կկորչեր, քանզի, ինչպես ինքն է ասում. «մեռնող ամեն մի ծերունու հետ մի վաղնջենիկ հայերեն բառ է մեռնում» (էջ 76):

Նա ոչ միայն գիտության սեփականությունն է դարձրել մահմեդականացած հայերի հոգևոր արժեքները, այլև գործնականում զբաղվել է բախտի դաժան հարվածով մայր ժողովրդից կտրված այդ հատվածը մայր ժողովրդի գիրկը վերադարձնելու հարցով: Նա 1980-ական թթ. միջնորդել է մեր կառավարությանը նրանց Հայաստան տեղափոխելու խնդրով, սակայն այդ հարցը լուծում չի ստացել:

Այս գիրքը նորություն է բերում հայերենագիտությանը մի քանի առումներով՝ և բարբառագիտության, և ժողովրդի պատմության անձանոթ մնացած էջերը լրացնելու, և երգարվեստի՝ երաժշտության և ազգագրության: Այսպես, օրինակ՝ քրիստոնյա համալսարանի բարբառը թեև ուսումնասիրված է Հ. Աճառյանի կողմից, սակայն նրա խոսվածքների կամ տարբերակների քննությունը մնացել է բաց: Համալսարանի սփռված լինելը սևծովյան ավերին և դժվարամատչելի անտառներում ու գետերի գոգավորություններում՝ դժվարացրել է նրանց ամենօրյա շփումները միմյանց հետ, մեկուսացրել տարբեր համայնքներից՝ նպաստելով քերականական, բանապաշարային տարբերակների ստեղծմանը, մղելով ուրույն զարգացման մի ուղի: 1944թ. Աջարիայից Ղազախստան, Ուզբեկստան և Ղրղզստան աքսորված հավատափոխ համալսարանից 1980-ական թվականներին Ս. Վարդանյանի կատարած գրառումները՝ հեքիաթներ, երգեր, զրույցներ, նաև ԳԱԱ լեզվի ինստիտուտի կազմած հայ բարբառների ատլասի հարցարանի ծրագրով լրացրած բառարանը և բառհոգվածները խիստ արժեքավոր ներդրում են հայ բարբառագիտության ասպարեզում, որովհետև փաստորեն նա է հայտնաբերել Համալսարանի բարբառի խոսվածքն իր թուրքականիցների և արդրլեցիների տարբերակներով, որոնց մեկուսացված լինելը գեր է պահել այլ խոսվածքների ազդեցությունից՝ փրկելով բազմաթիվ բառեր ու քերականական-ձևաբանական տարբերակներ, որոնք Հ. Աճառյանի ուսումնասիրության մեջ չեն արձանագրված և գիտական մեծ արժեք են ներկայացնում: Անշուշտ, այս գրքի նյութերը կօգտագործվեն լեզվի ինստիտուտի ծրագրած բարբառագիտական ատլաս-

տում և «Հայոց լեզվի բարբառային բանաբանում»:

Հ. Աճառյանի «Բնությունը Համալսարանի բարբառի» (1947թ.) ուսումնասիրությունը հենված է միայն Տրապիզոնի և ճանհի, երբեմն Մալայի խոսվածքների վրա, սակայն կրոնափոխված համալսարանից Ս. Վարդանյանի գրի առած նյութերը պարզում են, որ գոյություն է ունեցել նաև խոսվածքի խոսվածք, որը տարբերվում է հիշյալ խոսվածքներից պայթաբաղաձայնական համակարգով և, մասամբ, ձևաբանությամբ: Այն ավելի հին, արխայիկ գծեր է ներկայացնում:

կում է «ուլունք», ուստի տարբերելու համար ասում են հավի հիլուն (հավի ուլունք), որ է «կոճակ»: Սրանից էլ «կոճակեղ, կոճկեղ» դառնում է հիլունինն օնցընուլ «ուլունքները անցկացնել» կամ մի բառով՝ հիլունլ » (Բնությունը Համալսարանի բարբառի, էջ 12):

Խոփայի խոսվածքում ևս չկան կոճկեղ կամ կոճակ բառերը, սակայն կա սահաֆ՝ արաբերեն «խեցի» բառը, որը միայն կոճակի նշանակությամբ է գործածվում: Հասկանալի է նման իմաստով սահաֆի գործածությունը ծովափին բնակվող ժողովրդի համար:

Քանի որ կրոնափոխ խոփայիցների մեծ մասը Թուրքիայի Արդվինի նահանգում է մնացել, ուստի պետք է սահմանից այն կողմ նույնպես ձայնագրություններ կատարել, ուր 20-25 հազար խոփայցիներ են բնակվում:

Խոփայի խոսվածքում ստեղծվել են գեղեցիկ բառեր, որոնք չեն հանդիպում այլուրեք, այսպես՝ «հողիերգիչը» գործ է ածվում արորի իմաստով: Գեղեցիկ բառ է նաև «փութնոնիչը» (բուրդ մանիչ), որը գործ է ածվում ճախարակ բառի փոխարեն:

Ս. Վարդանյանի գրի առած նյութերում նկատվում են պայթաբաղաձայնական համակարգերի տարբերություններ Հ. Աճառյանի Համալսարանի բարբառի ուսումնասիրության և խոփայի խոսվածքի բաղաձայնական համակարգի միջև: Խոփայում ձայնեղները խլանում են, խուլերը՝ ձայնեղանում (Ս. Վարդանյան, էջ 75):

Ս. Վարդանյանը զգալի տարբերություններ է արձանագրում Համալսարանի բարբառի և խոփայի խոսվածքի ձևաբանության մեջ և ճիշտ նկատում, որ դրանք սպասում են իրենց ուսումնասիրողներին (էջ 75):

Համալսարանի մեջ վերջին տարիներին արթնացել է իրենց արմատներին վերադառնալու ցանկությունը, ուստի նրանց հոգևոր արժեքները գրի առնելու այս միջոցը խթան կհանդիսանա թաքնված վիճակից դուրս գալու և գուցե մայր ժողովրդի գիրկը վերադառնալու համար: Ս. Վարդանյանը համալսարանի մահմեդական հայերի այս փոքրիկ համայնքից գրի է առել 19 երգեր և 55 խաղիկներ, իսկ որքան շատ կարող են փրկվել Արդվինի նահանգում թաքնված հայերի մոտ պահպանված երգերն ու պարերը գրի առնելու դեպքում: Որքան մոր զրույցներ կարելի է հայտնաբերել Թուրքիայի համալսարաններին այցելելով: Ս. Վարդանյանի հաջորդ քայլը պետք է լինի Թուրքիայի համալսարաններին այցելելը:


Ավարտելով մեր խոսքը՝ ասենք, որ Սերգեյ Վարդանյանը սովորական գիտնական չէ, նա անձնագործ, գրկանքների գնով հայ մշակույթի կրթած արժեքները վերադարձրել է իր ժողովրդին: Նա դեռ եռանդով լի է և մուսուլման համալսարանների մոտ պահպանված մյուս արժեքներն էլ մայր ժողովրդի մշակույթին միացնելու դժվարին աշխատանքները շարունակելու երդվյալն է մնում: Նրա գիրքը իսկապես մի հանրագիտարան է նաև համալսարանի մասին ընդհանրապես անցյալում և մեր ժամանակներում հրատարակված սպառնալից գրականությամբ, ուր հեղինակը ամենայն բռնադատությամբ հավաքել է ու ներկայացրել վաղեմի հրատարակություններն ու մերօրյա վկայությունները:

ՆԵՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, Երևան, 2010թ., փետրվարի 4

ԼԵՎՈՆ ԶԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ

(1907 Տրապիզոն - 1995 Լու Անգելես)



ԱՍԱՑՈՒԾՔ ԼՈՒԻԹԵԱՆ

Դուն, գաղտնապահ Արծաթ շրթեր ես աղջկայ, Արծաթ եւ նուրբ շրթեր սիրոյ Ձոր անշշուկ կը համբուրեմ ես գանգրահեր կապոյտ տղայ:

Մուճակներով մետաքսաթել Աղջիկ ես դուն, Ու մութ հողուոյս մէջ կու գաս ման Նուրբ մատներով մէջ փղոսկրեայ Բռնած ճերմակ, Լուսանման Պերճ գորգին:

Դուն, ծխամորճ բանաստեղծին, Դուն, օրհնեալ ջուր ճակտին վրայ գործաւորին խոնարհներուն դուն սրտի մոմ, խորհողներուն ցաւն անմեկին, Դուն, գլուխներն արդուր, բարի Բուր մեռած մայրիկներուն, Ու դուն, բուրվառ, Ծուխը, որուն արծաշողփ կը փաթթուի Անման մարդոց հոգիներուն:

Սեղանին վրայ՝ Գրող տղու մը արեղայ, Դուն կոյր ծաղիկ մ'ես մետաղէ, Երկաթի գոյն, Կուռ թերթերուդ մէջ ցուրտ ու լայն Ան կը գրէ Գիրքն իր հոգուոյն:

Գիշեր ատեն, Դուն լոյս անուշ, Ու լոյսին մէջ այդ լոյսն անուշ Մտածումներն իմ նագօրէն Մերկ աղջկանց պէս կը պարեն:

Սուրբ Լուսինն, Որքան ման ես դաշնակին... Այլեւս հիմա որբ ու միճակ ես կը վախճամ գայն մուսազե, Մահուան դաշնակ, Որ կը կենայ, Ինչպէս դազաղ սեւ ու հսկայ Արահին մէջ հրեշտակաբոյր: Մօրս հոգին հոն կը պանկի, Պատկի ոգին իմ պզտիկ մօր, Պատկերն որուն ճերմակ հարսի Թաշկինակով մը սեւածիր ես ծածկեցի:

Դուն, Յիսուսին Արնակարմիր սիրտ ես տրտում, Խաչին վրայ՝ Սիրտը իրեն արհնուլայ: Միսն ես լեռի ու խնկահամ Մեր սուրբերուն... Դուն, կտրուած ու գանգրահեր Գլուխն ես թուխ Յովհաննէսին մեծ Մկրտչին... Դուն Աստուծոյ Ստեղծագործման Բառը վերջին:

Օ՛, լռութիւն, Աղջիկ տրտում, Համբուրէ գիս... Ես կարօտ եմ քու գրգանքին, Քու շրթերուն ու քու ծոցին... Աղանու պէս իջիր ուսիս, Իջիր վրաս... Թերթերուն պէս ծաղիկներուն, Օրհնէցի պէս թռչուններուն, Իջիր, իջիր Ու ծածկէ գիս... Հոգիին պէս իմ մայրիկիս, Աղուր, քնքոյ իմ մայրիկիս...

Рафаэл Абрамян

АРМЯНСКИЙ НЕКРОПОЛЬ АБХАЗИИ

*Р. М. Абрамян
Некрополь армян Абхазии
как генеалогический источник
Опубликовано в № 2 журнала
"Генеалогия Северного Кавказа"
(Нальчик, 2002).
С. 195-197.*

Первые поселения армян на территории Абхазии возникли в середине XIX в. Их основывали турецкоподданные армяне занимавшиеся на новых землях сельским хозяйством. Процесс колонизации еще более усилился после окончания Русско-турецких войн (последняя завершилась в 1878 г.). Однако намного более многочисленная волна эмигрантов в Абхазию появилась в 1915-1916 гг., когда из бывшей Османской Империи, спасаясь от развязанного младотурецкими властями геноцида, бежали десятки тысяч армянских семей. Часть беженцев осела на постоянное жительство в Абхазии, где их потомки основали значительную армянскую общину. Являясь в своей массе выходцами из северо-восточных прибрежных районов Османской Империи (исторический Понт) армяне современной Абхазии относятся к группе т.н. амшенцев (по названию исторической области Амшен). Амшенцы распадаются на несколько локальных субэтнических групп-трабзонци, дженкици, ордуци и др. Они сохраняют свой своеобразный диалект (ветвь западно-армянского) и в быту придерживаются собственных им этнографических традиций.

Истории, этнографии, традиционной культуре, диалектологии и другим проблемам изучения армян Абхазии посвящена значительная литература. Однако генеалогических публикаций среди этих работ практически не встречается. Во многом это связано с проблемой скудности источниковедческой базы, существенно затрудняющей исследовательскую деятельность.

